ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Աճուրդին մասնակցելու ցանկություն հայտնած անձինք աճուրդի մասին հրապարակային ծանուցման հրապարակման օրվանից ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա ժամը 16.00-ն կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան՝ ՀՀ ք. Երևան, Օտյան 53/2 հասցեով:

Հայտում պետք է նշվեն.

ա) հայտատու իրավաբանական անձի անվանումը, ծանուցման հասցեն, իրավաբանական անձի ներկայացուցչի (նրա անունից հանդես եկող անձի) անունը, ազգանունը, ծանուցման հասցեն և հեռախոսահամարները,

բ) հայտատու ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարները, ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, հեռախոսահամարները,

գ) պարտապանի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը) և սնանկության գործի համարը,

դ) աճուրդի անցկացման օրը, ամիսը, տարեթիվը,

ե) կառավարչի անունը, ազգանունը,

զ) հայտին կցվող փաստաթղթերի ցանկը:

Հայտը ստորագրվում է հայտատուի (նրա անունից հանդես եկող անձի, ներկայացուցչի) կողմից:

Հայտին կցվում են՝

ա) լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով նախավճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը,

բ) լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով,

գ) իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի վավերացված պատճենները.

դ) անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները.

ե) ֆիզիկական անձ հայտատուների դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Հայտը ստորագրվում է ֆիզիկական անձի կողմից, իսկ եթե հայտատուն իրավաբանական անձ է՝ կանոնադրությամբ կամ այլ հիմնադիր փաստաթղթերով դրա համար լիազորված անձի կողմից և կնքվում է իրավաբանական անձի կնիքով:

Աճուրդի օրը՝ աճուրդը սկսվելուց 10 րոպե առաջ, հայտատուն կառավարչի կողմից ստանում է աճուրդին մասնակցելու վկայական:

2. Նախավճարի չմուծման, ինչպես նաև եթե այն մուծված է, սակայն աճուրդի մասնակցելու վկայական տալու պահին դեռ նստած չէ սնանկության հատուկ հաշվին, այդ հայտը համարվում է անվավեր և չի դիտարկվում:

3. Աճուրդն անցկացվում է բաց, հրապարակային սակարկությունների միջոցով, ՀՀ Հրապարակային սակարկությունների մասին օրենքի համաձայն:

Աճուրդի մասնակցության համար հայտ ներկայացրած անձանց և գնորդների մասին տեղեկությունները ենթակա չեն հրապարակման:

Աճուրդում մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդից հետո 3 բանկային օրվա ընթացքում՝ նրա դիմումի հիման վրա:

Այլ դեպքերում նախավճարը չի վերադարձվում:

4. Աճուրդներն անցկացվում են դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ:

Սահմանվում են գույքի մեկնարկային գնի հավելումների հետևյալ նվազագույն քայլերը՝

N/N	Գույքի մեկնարկային գինը (դրամ)	Նվազագույն քայլը
1.	մինչև 100.000	1.000 դրամ
2.	100.001-500.000	5.000 դրամ
3.	500.001-1.000.000	10.000 դրամ
4.	1.000.001-10.000.000	50.000 դրամ
5.	10.000.000-ից ավելի	100.000 դրամ

5. Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկում է ամենաբարձր գինը:

Աճուրդում հաղթած անձը և կառավարիչն աճուրդն անցկացնելու օրը ստորագրում են դրա արդյունքների մասին արձանագրությունը:

Եթե աճուրդում հաղթած անձը հրաժարվում է արձանագրությունն ստորագրելուց, ապա նրա մուծած նախավճարը չի վերադարձվում:

6. Աճուրդում հաղթած անձը պարտավոր է աճուրդն անցկացվելու օրվանից 10 օրացույցային օրվա ընթացքում սնանկության հատուկ հաշվին մուծել այն գումարը, որով գնել է գույքը (գնման գինը)՝ հաշվանցելով նախօրոք մուծված նախավճարը:

Գումարը սահմանված ժամկետում չմուծվելու դեպքում նախավճարը չի վերադարձվում և մնում է սնանկության հատուկ հաշվում:

7. Աճուրդում հաղթած անձի կողմից գնման գինը մուծվելուց, ինչպես նաև ՀՀ Սնանկության դատարանի կողմից վաճառված գույքի վրա կիրառված արգելանքի վերացման որոշումը կառավարչին տրամադրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կառավարիչը և աճուրդում հաղթած անձը կնքում են առուվաճառքի պայմանագիր:

8. Եթե աճուրդում վաճառվել է գույք, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա նոտարական վավերացում կատարելու և գույքը գրանցելու հետ կապված ծախսերը իրականացնում է գնորդը:

9. Աճուրդը հայտարարվում է չկայացած, եթե՝

ա) աճուրդին չի ներկայացել ոչ մի գնորդ.

բ) աճուրդում հաղթած անձը չի մուծել գնման գինը:

Աճուրդը չկայացած պետք է հայտարարվի ոչ ուշ, քան դրա համար հիմք ծառայած հանգամանքները վրա հասնելու հաջորդ օրը: Այդ հայտարարության հետ մեկտեղ հրապարակվում է կրկնակի աճուրդ անցկացնելու մասին հայտարարությունը, որն անցկացվում է չկայացած աճուրդի օրվանից ոչ շուտ, քան 15 օրվա ընթացքում:

Կրկնակի աճուրդն անցկացվում է աճուրդի անցկացման համար սահմանված կարգով:

Աճուրդը չկայացած համարվելու դեպքում հաջորդ աճուրդի պայմանները, այդ թվում՝ մեկնարկային գինը, կարող են փոփոխվել:

Սնանկության գործերով կառավարիչ Վ. Ապրեսյան